

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐԶ

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Զ. Ռ.

Լեզուն ազգային մշակույթի հայելին է, որտեղ կառուցողական մակարդակում կարևորագույն դեր ունեն դարձվածային միավորները կամ պարզապես դարձվածքները:

Դարձվածաբանությունը, որպես գիտակարգ, դեռևս շարունակում է լինել շատ լեզվաբանների ուսումնասիրության առարկա: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ դարձվածքները յուրաքանչյուր ազգի էթնոհոգեբանության գլխավոր նշույթներն են: Մասնագիտական գրականության մեջ առայժմ միասնական կարծիք գոյություն չունի դարձվածքի էական տարբերակիչ հատկանիշների, դարձվածաբանության ընդգրկման սահմանների վերաբերյալ: Դեռևս վերջնական լուծում չի տրված այն հարցին, թե ի՞նչ է դարձվածքը, դարձվածաբանության մեջ լեզվական ո՞ր միավորներն են ընդգրկվում:

Մի շարք մասնագետներ դարձվածաբանությանն են վերագրում միայն բառին համարժեք բարդ կարգի այնպիսի իմաստաբանական միավորներ, որոնց հատուկ են վերաիմաստավորումը և փոխաբերականությունը: Իսկ որոշ այլ մասնագետներ բուն դարձվածային կապակցությունների հետ դարձվածաբանության մեջ ընդգրկում են առածա-ասացվածքային արտահայտությունները, թևավոր խոսքերը, բարդ կամ բաղադրյալ տերմինները:

Անհրաժեշտ է նշել, որ դարձվածքների սահմանների որոշման անկայունությունը, դարձվածային միավորների ոչ հստակությունը պայմանավորված են դարձվածքների սահմանման բազմազանությամբ և դարձվածային միավորների տարբերակման կայուն չափանիշների բացակայության հանգամանքով: Դիտվելով լեզվում որպես առկա կայուն կապակցությունների ամբողջություն՝ դարձվածքները սահմանվում են որպես բառային այնպիսի անբաժան, իմաստով ամբողջական բառակապակցություններ, որոնք խոսքի մեջ վերարտադրվում են իբրև խոսքային պատրաստի միավորներ:

Վերջին տարիներին նշանակալիորեն աճել է դարձվածաբանական համեմատական ուսումնասիրությունների հանդեպ հետաքրքրությունը, որը հաստատվում է մի շարք ուսումնասիրությունների առկայությամբ: Դրանք թույլ են տալիս ավելի ճշգրիտ սահմանել այդ միավորների ուսումնասիրության առարկան, ճյուղերը և մեթոդները:

Յուրաքանչյուր լեզու հարուստ է և անկրկնելի իր գրական արժեքներով, պատմությամբ և ժողովրդական իմաստությամբ: Աշխարհի տարբեր ժողովուրդների պատմությունը, հոգևոր մշակույթը և ավանդույթները լավ իմանալու

համար հարկ է ուշադրություն դարձնել ժողովրդական հեքիաթների, աֆորիզմների, դարձվածային միավորների, առածների և ասացվածքների վրա: Մակայն պատկերավոր արտահայտություններին ավելի ցանկալի է հասու լինել բնօրինակի լեզվով, քանի որ թարգմանությունը հաճախ հնարավորություն չի տալիս լիովին զգալու արտահայտության իմաստային բովանդակության խորությունը: Իհարկե, վերջիններիս թարգմանությունը կապված է մի շարք խնդիրների հետ:

Դարձվածքների թարգմանությունը բավական բարդ գործ է, քանի որ դա պահանջում է այս կամ այն մշակույթի, լեզվի, համատեքստի ըմբռնման նուրբ իմացություն: Դարձվածքները պարունակում են ժողովրդական իմաստություն, արտացոլում են այս կամ այն ժողովրդի բարոյական արժեքները: Նրանց միջոցով կարելի է հասկանալ, թե ինչն է կարևոր որոշակի մշակույթի մարդկանց համար, և թե ինչպիսի արժեքներ են կառավարում նրանց կյանքը:

Թարգմանության գլխավոր պահանջը բնօրինակի և թարգմանության տեքստերի համարժեքությունն է, որը հնարավոր է իմաստային կամ պրագմատիկ (գործաբանական) փոխակերպման պահպանման դեպքում:

Թարգմանական տեսանկյունից դարձվածային միավորները բաժանվում են երկու խմբի՝

- համարժեքներ ունեցող դարձվածային միավորներ,
- առանց համարժեքների դարձվածային միավորներ:

Դարձվածային միավորները երբեմն հարկ է լինում թարգմանել՝ լիովին փոխելով նրանց պատկերավոր հիմքը: Հաճախ դա արվում է նրանց արտահայտչական նրբերանգները և գործառական-ոճական առանձնահատկությունները պահպանելու նպատակով:

Դարձվածքների թարգմանության բարդությունը նաև նրանում է, որ նրանցից շատերը, ունենալով հուզական բնույթ, պատկանում են որոշակի խոսքային ոճի և հաճախ կրում են վառ արտահայտված ազգային բնույթ:

Ազգամշակութային բաղադրիչ պարունակող դարձվածքների մեջ առաջին հերթին կարելի է առանձնացնել այն դարձվածային միավորները, որոնք ներառում են ձևական և բովանդակային ազգամշակութային բաղադրիչ¹: Այսինքն՝ նույն հասկացությունը տարբեր լեզուներում դրսևորվում է տարբեր պատկերների միջոցով: Ձևական ազգային նշույթավորվածություն ունեցող դարձվածքների թարգմանության դեպքում կարելի է հասնել թարգմանության և բնագրի գործառական-հաղորդակցական համարժեքությանը տարբեր միջոցներով, իսկ բովանդակային ազգային նշույթավորվածություն ունեցող դարձվածքների թարգմանության հնարավորությունները շատ սահմանափակ են: Դրանք թարգմանելիս շատ դեպքերում հարկ է ընթերցողին հաղորդել դարձվածքի հետ կապված արտալեզվական տեղեկատվությունը:

¹ Բաղդասարյան Հ., Թարգմանաբանության ներածություն, Ե., 2007, էջ 213-214:

Դարձվածային միավորների թարգմանության բարդությունը նաև պայմանավորված է դրանց բովանդակային պլանի բարդ, բազմահնչյուն բնույթով, ինչպես նաև մշակութային զգալի տեղեկատվական ծանրաբեռնվածությամբ:

Դարձվածքները, ըստ էության, լեզվական միավորների մի շերտ են, որոնք առավել ակտիվորեն օգտագործվում են մշակութային նշույթավորվածություն ունեցող իմաստների կամ պատմական իրողությունների, խորհրդանիշների, կարծրատիպերի, ինչպես նաև յուրաքանչյուր լեզվական համայնքի կողմից հասարակական և հոգեբանական կյանքի նշույթների մարմնավորման և արտահայտման համար:

Հարկ է նշել, որ դարձվածքների թարգմանության ընթացքում հաճախ ի հայտ եկող դժվարությունները կախված են լինում՝

- բնօրինակ տեքստում դարձվածքի ճանաչման և նույնականացման աստիճանից,
- դարձվածքի՝ որպես տարածակրված լեզվական միավորի ընկալումից,
- դարձվածքի ազգամշակութային նրբերանգներից, որին հաճախ ծանոթ չէ հենց թարգմանիչը,

• դարձվածքի պատկերավոր հիմքի փոխանցման խնդրից, այն դեպքում, եթե թարգմանության լեզվում բացակայում է համապատասխան համարժեքը:

Բոլոր այս խնդիրները կդառնան մեր քննության առարկան՝ հիմնվելով Սերվանտեսի «Խրատական նովելներ»-ից հանված օրինակների վրա:

Այսպես, համեմատենք՝

Y así podre entrar dentro de noche y enseñaros mejor que **al preste Juan de las Indias**. (El celoso extremeño)

Այդ եղանակով կկարողանամ գիշերները ներս գալ և ձեզ ավելի լավ սովորեցնել, քան **քահանա Խուան դե լաս Ինդիասին**:

Այս նախադասության մեջ ներկայացված է *¡al preste Juan de las Indias!* դարձվածքը, որը կիրառվում է հուզական բնույթի կառույցներում՝ նշելով մեծ կարևորություն ներկայացնող երևակայական կերպար: Իսկ ինչ վերաբերում է հայերենին, այստեղ դարձվածքի փոխարեն տրված է բառացի թարգմանություն, որը հնարավորություն չի ընձեռում ծանոթանալու դարձվածքի հետ կապված արտալեզվական տեղեկատվությանը: Նախ և առաջ պետք է նշել, որ *Preste Juan*-ը XII-XVII դարերում Եվրոպայում հայտնի կերպար էր: Ասում են, որ հայրապետ էր, այդտեղից էլ իր կոչումը *Preste*. վանական, որը վարում էր պատարագ, և քրիստոնյա, որը ուղղորդում էր քրիստոնյա ժողովրդին մասնատված Արևելքի մահմեդականների և հեթանոսների մեջ: Ենթադրաբար սերում էր երեք Մոզ թագավորներից, առատաձեռն և առաքինի մարդ էր, որը ղեկավարում էր մի տարածք՝ լի հարստությամբ և

զանձերով, որտեղ գտնվում էր Սուրբ Թոմասի հայրապետությունը²: Քանի որ հայ ընթերցողը անտեղյակ է այդ արտալեզվական տեղեկատվությանը, անհրաժեշտություն է ծագում այն ինչ-որ կերպ հաղորդել թարգմանվող տեքստում:

Դարձվածքների թարգմանության հիմնական միջոցները հետևյալն են.

1. դարձվածային համարժեք կամ դարձվածային զուգահեռ,
2. սովորական պատճենում,
3. դարձվածային համաբանություն կամ ոչ զուգահեռ դարձվածային համարժեք,
4. դիպվածային պատճենում կամ բառացի թարգմանություն,
5. դիպվածային կիսապատճենում,
6. ազատ արտահայտություն կամ անհատական դարձվածք,
7. նկարագրական արտահայտություն,
8. մենաբառային³:

Դարձվածքների թարգմանության առաջին միջոցը դարձվածային համարժեքն է (դարձվածային զուգահեռ): Դիտարկենք դարձվածային համարժեքի մի օրինակ՝

No **habían de haber tragado la tierra** al niño, y al ama, y a ella. (La señora Cornelia)

Չէին կարող **գետնի տակն անցնել** երեք հոգով՝ երեխան, սպասուհին և ինքը:

Հետևյալ օրինակում իսպաներեն նախադասության մեջ տրված է “tragarse la tierra a alguien” դարձվածքը, որը ասվում է մեկի մասին, որը վաղուց չի երևացել: Իսկ հայերենում տրված է նրա համարժեքը՝ «գետնի տակն անցնել» դարձվածքը, որը նշանակում է՝

1. մահանալ, 2. անհետանալ, 3. ամոթից մեռնել: Ինչպես տեսնում ենք, իսպաներեն դարձվածքն ունի միայն մեկ իմաստ, իսկ հայերենը բազմիմաստ է, սակայն դա չի խոչընդոտում, որ դրանք դիտարկվեն որպես համարժեքներ, քանի որ երկու դարձվածքները արտահայտում են նույն միտքը:

Դարձվածքների թարգմանության մյուս միջոցը սովորական պատճենումն է: Այս դեպքում հարկ է նշել, որ բնագրի դարձվածքները, որոնք թարգմանվել են պատճենմամբ, դարձվածքներ են դիտարկվում նաև թարգմանվող լեզվում և գրանցված են տվյալ լեզվի դարձվածային ֆոնդում: Այսպես, համեմատենք՝

Los que ayer estaban en la cumbre de la **rueda de la fortuna** hoy están hallados y abatidos a los pies de la desgracia. (El coloquio de los perros)

Ովքեր երեկ **բախտի անիվի** վերևում էին, այսօր տապալված են և փռված դժբախտության ոտքերի տակ:

² Seco M., Andrés O., Ramos C. Diccionario fraseológico documental del español actual, Madrid, 2004.

³ Նազարյան Ա., Բաղդասարյան Հ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Ե., 2000, էջ 363-364:

“Rueda de la fortuna”⁴ դարձվածքը նշանակում է փոփոխական ճակատագիր: Ինչ վերաբերում է հայերենին, այստեղ նույնպես տրված է դարձվածք՝ բախտի անիվ: Սա նշանակում է կյանքի իրավիճակ, որը կախված չէ մարդուց և դիտարկվում է որպես սովորական պատճենում, քանի որ գրանցված է հայերենի դարձվածային ֆոնդում:

Ազգամշակութային բաղադրիչ պարունակող դարձվածքների թարգմանության մյուս միջոցը դիպվածային պատճենումն է, որը նույն բառացի թարգմանությունն է:

Դիպվածային պատճենումը ոչ դարձվածային թարգմանության միջոցներից է, քանի որ թարգմանվող լեզվում բնագրի դարձվածքների պատճենումները չունեն դարձվածքի կարգավիճակ և հետևաբար չեն գրանցվում լեզվի դարձվածային ֆոնդում: Պատճենումների միջոցով հնարավոր չէ հասնել համարժեքության լեզվական բոլոր մակարդակներում:

Քննարկենք պատճենման մի օրինակ՝

Ni por desabrocharla, ni **echarla agua** en el rostro volvía en sí. (La fuerza de la sangre)

Ոչ աղջկա կոճակները արձակելը, ոչ էլ երեսին **ջուր ցայելը** նրան ուշքի չբերեցին:

Իսպաներենի օրինակում ունենք “*echar agua en*” դարձվածքը, որը նշանակում է սառեցնել, ջրել, ազդել, ինչպես սառը ցնցուղը: Իսկ հայերեն նախադասության մեջ ունենք «ջուր ցայել» արտահայտությունը, որը դարձվածք չէ, այլ պատճենում, որը շատ տեղին է նման դեպքում: Կարելի է ավելացնել, որ “*echar agua en*” դարձվածքը նաև բառերի ազատ կապակցություն է, որը որոշ համատեքստերում կարող է փոխաբերական իմաստով գործածվել: Տվյալ դեպքում այն կարելի է ընկալել և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստով:

Հայերենում հաճախ կարելի է հանդիպել կիսապատճենումների: Բնական է, քանի որ իսպաներենը և հայերենը, որպես իրարից հեռու ցեղակից լեզուներ, կապակցված չեն զարգացման ընդհանուր օրինաչափություններով: Այդ լեզուների շարահյուսական և ձևաբանական կառուցվածքներում առկա տարբերությունները՝ շատ հաճախ ստիպում են թարգմանչին դիմել կիսապատճենումների: Համեմատենք՝

No hay cosa que se le iguale para este menester como la de la ahuja y sirgo Colorado, porque todo lo demás es **andar por las ramas**. (La tía fingida)

Նման գործի համար ամենալավը հենց մախաթն է ու կանեփի ներկած թելը, քանի որ մնացածը նույնն է, թե **ճյուղերի վրայով վերն բարձրանաս**:

“*Andar por las ramas*” դարձվածքը նշանակում է մանրութների հետևից ընկնել, հարցի էությունը մի կողմ թողնել, իսկ ինչ վերաբերում է հայերենին, թարգմանիչը դիմել է դիպվածային կիսապատճենման:

Դարձվածքների թարգմանության առավել արդյունավետ միջոցը դարձվածային համաբանությունն է (ոչ զուգահեռ դարձվածային համարժեք): Այս միջոցով

⁴ Левинтова Э. И., Вольф Е. М., Мовшович Н. А., Будницкая И. А. Испанско-русский фразеологический словарь, М., 1985.

⁵ Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

թարգմանված դարձվածքները արտահայտում են նույն միտքը, մասնակի կամ ամբողջությամբ տարբերվում են իրենց պատկերավոր հիմքով, որը պայմանավորված է տարբեր ժողովուրդների կյանքի նյութական պայմանների առանձնահատկություններով, ինչպես նաև նրանց պատկերավոր մտածողության առանձնահատկություններով:

Համեմատենք՝

- Lo que has de hacer, amigo, es aconsejarme que haré yo para **caer en desgracia** de mi amo. (El amante liberal)

- Միակ բանը, որ պիտի անես, բարեկամս, այն է, որ ինձ պետք է խորհուրդ տաս, թե ինչ անեմ, որ **ընկնեմ տիրոջս աչքից**:

Այստեղ ունենք “caer en desgracia” դարձվածքը, որը նշանակում է ինչ-որ մեկի հարգանքը կորցնել, իսկ հայերենում ունենք «աչքից ընկնել» դարձվածքը⁶: Այս դեպքում առաջին հայացքից ունենք երկու տարբեր դարձվածքներ, որոնք չեն կարող ունենալ ոչ մի հարաբերակցություն, բայց պետք է նշել, որ համատեքստում, վերլուծելով երկու դարձվածքները, ակնհայտ է դառնում, որ դրանք արտահայտում են նույն իմաստը:

Շատ դարձվածքներ, որոնք ազգային նշույթավորվածություն ունեն, թարգմանվում են նկարագրական արտահայտություններով: Նման թարգմանությունը չի կարելի դիտարկել որպես համարժեք, քանի որ նմանատիպ դեպքերում հնարավոր չէ միաժամանակ հաղորդել դարձվածքների իմաստային երանգները և արտահայտչականությունը: Թարգմանիչը դիմում է չեզոք նկարագրությունների հատկապես այն դարձվածքների թարգմանության դեպքում, որոնք ունեն բովանդակության իմաստային նշույթավորվածություն, որտեղ դրանց արտալեզվական տեղեկատվությունը գրեթե անհասանելի է թարգմանության ընթերցողներին:

Համեմատենք՝

Y que algunos días salía con cinco y con seis reales de ganancia, con que comía y bebía y triunfaba **como cuerpo de rey**. (Rinconete y Cortadillo)

Եվ երբեմն կարողանում էր վաստակել մինչև հինգ-վեց ռեալ, որով սնվում էր, խմում և **թագավորի կյանք** վարում:

“Como cuerpo de rey” դարձվածքը նշանակում է ինչպես դրախտում, մեծ բավականություն ստացած, իսկ հայերեն թարգմանվում է «թագավորի կյանք» արտահայտությամբ: Կարելի է ասել, որ տվյալ դեպքում թարգմանությունը կատարվել է նկարագրական արտահայտության միջոցով, քանի որ ակնհայտ է, որ կա համեմատություն թագավորի շքեղ կյանքի հետ:

Դարձվածքների թարգմանության մյուս միջոցն ազատ արտահայտությունն է կամ անհատական դարձվածքը:

⁶ Բեդիրյան Պ., Դարձվածաբանական բացատրական բառարան, Ե., 1971:

Սովորաբար նման թարգմանությունները հաջողված չեն, եթե համատեքստը չի օգնում ընկալել դարձվածքի իմաստը: Դիտարկենք ազատ արտահայտության մի օրինակ՝

En esto llegó la dueña, y le aseguró que el viejo **dormía más y mejor**. (El celoso extremeño)

Այդ պահին ներս մտավ դուենյան և նրան հավատացրեց, որ ծերուկը **խոր քնով քնած էր**:

Դիտարկենք անհատական դարձվածքի մի օրինակ՝

Allí sé que **cobró aliento** la fama de la gitanilla. (La gitanilla)

Հենց այստեղ էր, որ գնչուհու համբավը **հասավ իր գագաթնակետին**:

“Dormir a más y mejor” դարձվածքը նշանակում է մեռածի պես քնել⁷: Իսկ ինչ վերաբերում է հայերենին, այստեղ չունենք դարձվածք, այլ տրված է «խոր քնով քնել» արտահայտությունը: Որոշ չափով այս դեպքում թարգմանիչը դիմել է ազատ արտահայտության միաժամանակ պահպանելով տրված դարձվածքի պատկերավոր հիմքը:

Երկրորդ օրինակում տրված է “cobrar aliento(s)” դարձվածքը, որը նշանակում է՝ 1. շունչ առնել, 2. որոշել, համարձակվել: Իսկ հայերենում ներկայացված է «գագաթնակետին հասնել» անհատական դարձվածքը:

Պետք է նշել, որ կան մի շարք դարձվածքներ, որոնց թարգմանությունը կատարվում է մենաբառային միջոցով: Նման թարգմանական միջոցի էությունն է բնագիր տեքստի դարձվածքները ներկայացնել մեկ բառով:

Օրինակ՝

Pero ya ella, viendo el mal suceso, **se había puesto en cobro** y no pareció jamás. (El licenciado vidriera)

Սակայն վերջինս, տեսնելով դեպքերի նման շրջադարձը, արդեն **չքացել էր** ու այլևս երբեք չերևաց:

Այստեղ ներկայացված է “ponerse uno en cobro” դարձվածքը, որը նշանակում է թաքնվել: Հայերենում ունենք չքանալ բայը, հետևաբար կարող ենք եզրակացնել, որ թարգմանությունը կատարվել է մենաբառային միջոցով:

Թեև գործնականում լեզվական միավորների կապակցական հնարավորություններն անսպառ են, ամեն դեպքում պատկերավոր դարձվածքների թարգմանության դեպքում թարգմանիչը բախվում է մի շարք հարկադրանքների, այսինքն՝ լեզվական նորմայով պայմանավորված սահմանափակումների: Պետք է հաշվի առնել, որ նույն բառաքերականական կառուցվածքով օժտված արտահայտությունների պատկերային ներունակությունը կարող է չհամընկնել տարբեր լեզուներում և խոչընդոտներ առաջացնել նման արտահայտությունների և

⁷ Varela F., Kubarth H. Diccionario fraseológico del español moderno, editorial Gredos, 1994, Madrid, 2004.

դարձվածքների պատճենման ժամանակ, քանի որ վերջիններս ձեռք են բերում բացարձակապես այլ իմաստ և հնչողություն⁸:

Շատ դարձվածքներ կարող են տարբերվել իրենց բովանդակային պլանով, այսինքն՝ երբ նույն պատկերը տարբեր լեզուներում տարբեր կերպ է դրսևորվում, որը շատ հաճախ խեղաթուրում է բնօրինակ տեքստի դարձվածքի իմաստը: Համեմատենք՝

- **Con su pan se lo coma** - dijo Rincón a este punto. (Rinconete y Cortadillo)

- Ուրեմն գողի **քթից կգա**, - նկատեց Ռինկոնը:

“Con su pan se lo coma” դարձվածքը նշանակում է դա նրա գործն է, նա գիտի թե ինչ է անում, իսկ հայերենում տրված է «քթից գալ» դարձվածքը, որը նշանակում է չկարողանալ վայելել ինչ-որ բան: Տրված նախադասության մեջ ինչպես իսպաներենում, այնպես էլ հայերենում ներկայացված են դարձվածքներ, սակայն երկուսն էլ արտահայտում են տարբեր իմաստներ և համատեքստում ընկալվում են տարբեր կերպ:

Թարգմանության ընթացքում հաճախ կարելի է հանդիպել համեմատական դարձվածքների պատճենումների կամ կիսապատճենումների, ինչպես նաև դարձվածային համարժեքների կամ համաբանությունների որոշ դեպքերի:

Դիտարկենք դիպվածային կիսապատճենի մի օրինակ՝

Y estabanlas esperando **como el agua de mayo** ella y sus doncellas y dueñas, que todas se juntaron para ver a Preciosa. (La gitánilla)

Եվ նրանց սպասում էր **ինչպես մայիսյան անձրևին**՝ ինքը, իր երկու աղջիկները և դուռնյաները, և բոլորը հավաքվել էին Պրեսիոսային տեսնելու:

Բսպաներեն նախադասության մեջ ունենք “como el agua de mayo” դարձվածքը, որը նշանակում է որևէ սպասված բան: Այս դարձվածքը դիտարկվում է համեմատական, քանի որ ըստ իր ստուգաբանական վերլուծության՝ հույսը կամ ցանկությունը հարաբերակցվում է զարնան գալուստի հետ: Բսկ ինչ վերաբերում է հայերեն թարգմանությանը, ապա այստեղ ներկայացված է դիպվածային կիսապատճենում, քանի որ հայերենում չկա նմանատիպ համեմատական դարձվածք:

Այսպիսով, դարձվածքների թարգմանությունը կապված է մի շարք խնդիրների հետ, որոնցից առաջինը դարձվածքների նույնականացումն է համատեքստում և նրանց հետ կապված արտալեզվական տեղեկատվության ուսումնասիրությունը: Հարկ է նշել նաև, որ բառարանները սահմանափակ հնարավորություններ են ընձեռում դարձվածքների թարգմանության խնդրում:

⁸ Բաղդասարյան Հ., նշվ. աշխ., էջ 223:

О ПРОБЛЕМЕ ПЕРЕВОДА ФРАЗЕОЛОГИЗМОВ

АЗИЗБЕКЯН З. Р.

Резюме

Перевод фразеологизмов является основополагающей проблемой переводческой деятельности. Фразеологический фонд каждого языка характеризуется национальными особенностями данной нации, что создает ряд препятствий при переводе. Именно в таких случаях нужно прибегать к таким способам перевода, каковыми являются фразеологический эквивалент или фразеологическая параллель, обыкновенная калька, фразеологическая аналогия или непараллельный фразеологический эквивалент, случайная калька либо дословный перевод, случайная полукалька, свободное выражение или индивидуальный фразеологизм, описательное выражение, моноксема.